ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/7709/02/25 ք. Երևան
«22» հոկտեմբերի 2025թ.

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Մ. Հարությունյանը (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով «Ֆաբրիկարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ Ներքին գործերի նախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ 25.06.2025 թվականի ծանուցագրով 03.02.2025 թվականին կնքված թիվ ԷԱՃԱՊՁԲ-ՈՁ/2025/L-19-4 ծածկագրով պայմանագրի ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից միակողմանի լուծումը և ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից 04.07.2025 թվականին կայացված «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» N5 որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը.

## Պ Ա Ր Զ Ե Ց

16.10.2025 թվականին ժամը 21:30-ին էլեկտրոնային դատավարություն համակարգի միջոցով Հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, մակագրվել և 17.10.2025 թվականին հասանելի է դարձել դատավոր Մ. Հարությունյանին:

(I) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 211-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանն արձանագրում է, որ դրանք ներկայացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 121-րդ և 122-րդ հոդվածներով սահմանված պահանջների պահպանմամբ, և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը, ինչպիսի պայմաններում հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

(II) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ հայցադիմումը ենթակա է վարույթ ընդունման, Դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ՀՀ ներքին գործերի նախարարությունից պահանջել «ԷԱՃԱՊՁԲ-ՈՁ/2025/L-19-4» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

(III) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործը պետք է քննել գրավոր ընթացակարգով, քանի որ կողմերի հետ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի քննության անհրաժեշտությունը տվյալ փուլում բացակայում է:

(IV) Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով՝ Դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. «Ֆաբրիկարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ ՀՀ Ներքին գործերի նախարարության՝ 25.06.2025 թվականի ծանուցագրով 03.02.2025 թվականին կնքված թիվ ԷԱՃԱՊՁԲ-ՈՁ/2025/L-19-4 ծածկագրով պայմանագրի ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից միակողմանի լուծումը և ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից 04.07.2025 թվականին կայացված «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» N5 որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել **2025 թվականի դեկտեմբերի 2-ին**՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

2. ՀՀ ներքին գործերի նախարարությունից պահանջել «ԷԱՃԱՊՁԲ-ՈՁ/2025/L-19-4» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Սույն որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ **հնգօրյա ժամկետում:**

4. Որոշումն օրենքով սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց:

5. Որոշումն ուղարկելու հետ միաժամանակ պատասխանողին տեղեկացնել հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:

6. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

**Դատավոր՝ Մալվինա Հարությունյան**

Digitally signed by HARUTYUNYAN MALVINA 5811880439

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*